ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/08

ք. Թալին «12» փետրվարի 2026թ.

Թալինի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Նելլի Սիրեկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ

առաջանալու դեպքում անձը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

2.4.5 Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում հիմնական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացություն: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում:

2.4.6 Նախնական փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից կրկնակի կամ լրացուցիչ (նախագծերի փոփոխության կամ լրամշակման անհրաժեշտության առաջացման ցանկացած դեպքում) փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության ծագման դեպքում՝ փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ գումարը վճարում է նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն մատուցող ընկերությունը: Ընդ որում, նախագիծերի կրկնակի, լրացուցիչ փորձաքննությունը իրականացնելու է նախնական փորձաքննություն իրականացրած կազմակերպությունը՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1983000** (մեկ միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1]

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է __5__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Թալինի համայնքապետարան	«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Թալին, Գայի 1	ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացի փ, 83շ բն 40
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 900462151045	Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05030561	ՀՎՀՀ 05547385
Համայնքի ղեկավար՝ Տ. Սահակյան	Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան
------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ	------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«12» փետրվարի 2026թ. կնքված
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀՇՁԲ-26/08» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1-6	50531140	Ստորև	դրամ	1983000	6	Ստորև	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրվանից հաշված 21-րդ (քսանմեկ) օրը

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԻՆՋԱ 250Մ, ՀԱՑԱՇԵՆ150Մ, Ն.ԱՐԹԻԿ 365Մ, ՍՈՒՍԵՐ 271Մ, ՑԱՄԱՔԱՍԱՐ230Մ, ՄԱՍՏԱՐԱ 400Մ, ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ 990Մ, ԴԱՎԹԱՇԵՆ 890Մ, ԳԱՌՆԱՀՈՎԻՏ 400Մ, ԱԳԱՐԱԿԱՎԱՆ 170Մ,, Ն.ԲԱԶՄԱԲԵՐԴ 440Մ, ԱՐԱԳԱԾԱՎԱՆ 700Մ, ԹԱԹՈՒ 300Մ, ԴԱՇՏԱԴԵՄ 310Մ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը	Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում
Ֆինանսավորման աղբյուր	Համայնքային բյուջե
Պատվիրատու	Թալինի համայնքապետարան
Ծառայության անվանումը	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա 250մ, Հացաշեն15 Ն.Արթիկ 365մ, Սուսեր 271մ, Ցամաքասար230մ, Մաստարա 400մ, Կաթնաղբ 990մ, Դավթաշեն 890մ, Գառնահովիտ 400մ, Ագարակավան 17 Ն.Բազմաբերդ 440մ, Արագածավան 700մ, Թաթու 300մ, Դաշտադեմ 3 ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվ
Աշխատանքների ռիսկայնության աստիճանը	փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ Միջինից բարձր (III կատեգորիա)) համաձայն ՀՀ կառավարության 19.03.20 թիվ 596-Ն որոշման
Փորձաքննության տեսակը	Պարզ փորձաքննություն
Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լ Հայաստանի Հանրապետության կիրառելի շինարարական նորմ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանք տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկա առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթեր նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխ

Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն ☐ ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, ☐ ՀՀ գնումների մասին օրենքի, ☐ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 12.12.2022թ. թիվ 28-Ն հրամանի ☐ ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: Հաղթող մասնակիցն իր միջոցներով պատվիրատուից (Թալին համայնքապետարան, Գայի 1 հասցե) վերցնում է նախագծանախահաշվային փաստաթղթերը, անցկացնում փորձաքննություն և հետ վերադարձնում պատվիրատուին: Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնային տարբերակով:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	**ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրը	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրվանից հաշված 21-րդ (քսանմեկ) օրը

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՎԱՍԱՐ-580Մ, ԿԱՐՄՐԱՇԵՆ 1030Մ, Ն.ՍԱՍՆԱՇԵՆ 9500Մ, ՈՍԿԵԹԱՍ 320Մ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և Վ. ԲԱԶՄԱԲԵՐԴ 5500Մ. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը	Գազամատակարարման ներքին ցանցի ընդլայնում և կառուցում
Ֆինանսավորման աղբյուր	Համայնքային բյուջե
Պատվիրատու	Թալինի համայնքապետարան
Ծառայության անվանումը	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զովասար-580մ, Կարմրաշեն 1030մ Ն.Սասնաշեն 9500մ, Ոսկեթաս 320մ գազամատակարարման ներքին ցանցի ընդլայնման և Վ. Բազմաբերդ 5500մ. գազամատակարարման ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ
Աշխատանքների ռիսկայնության աստիճանը	Միջինից բարձր (III կատեգորիա)) համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման
Փորձաքննության տեսակը	Պարզ փորձաքննություն
Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն Հայաստանի Հանրապետության կիրառելի շինարարական նորմերով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան

Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհե քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհե փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիմ վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձա ☐ ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, ☐ ՀՀ գնումների մասին օրենքի, ☐ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 12.12.2022թ. թիվ 28-Ն հրաման ☐ ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատվ ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթե փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնա թույլտվությունների տրամադրման կարգերի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամա հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: Հաղթող մասնակիցն իր միջոցներով պատվիրատուից (Թալի համայնքապետարան, Գայի 1 հասցե) վերցնում է նախագծանախահաշվա փաստաթղթերը, անցկացնում փորձաքննություն և հետ վերադարձն պատվիրատուին: Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնա տարբերակով:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	**ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրը	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրվանի հաշված 21-րդ (քսանմեկ) օրը

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՌՆԱՀՈՎԻՏ -3500Մ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 4500Մ, ԱՇՆԱԿ 11500Մ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐԱՄԱՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը	Ջրամատակարարման ցանցի կառուցում և հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	Համայնքային բյուջե
Պատվիրատու	Թալինի համայնքապետարան
Ծառայության անվանումը	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Գառնահովիտ -350 ջրամատակարարման ցանցի կառուցման, Դավթաշեն 4500մ, Աշնակ 1150 ջրամատակարարաման ցանցի հիմնանորոգման աշխատանքների նախագ նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ
Աշխատանքների ռիսկայնության աստիճանը	Միջինից բարձր (III կատեգորիա)) համաձայն ՀՀ կառավարության 19.03.201 թիվ 596-Ն որոշման
Փորձաքննության տեսակը	Պարզ փորձաքննություն
Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լի Հայաստանի Հանրապետության կիրառելի շինարարական նորմ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքն տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկա առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթեր նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխ

Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիմ վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայ □ ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, □ ՀՀ գնումների մասին օրենքի, □ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 12.12.2022թ. թիվ 28-Ն հրաման □ ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, □ ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատվ ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթե փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնայ թույլտվությունների տրամադրման կարգերի, □ ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամա հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: Հաղթող մասնակիցն իր միջոցներով պատվիրատուից (Թալի համայնքապետարան, Գայի 1 հասցե) վերցնում է նախագծանախահաշվայ փաստաթղթերը, անցկացնում փորձաքննություն և հետ վերադարձնո պատվիրատուին: Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնայ տարբերակով:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	**ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրը	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրվանից հաշված 21-րդ (քսանմեկ) օրը

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՏԱՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 75 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը	Հասարակական նշանակության օբյեկտների կառուցում
Ֆինանսավորման աղբյուր	Համայնքային բյուջե
Պատվիրատու	Թալինի համայնքապետարան
Ծառայության անվանումը	ՀՀ Արագածոտնի Մարզի Թալին համայնքի Մաստարա բնակավայրում 75 տ հզորության մանկապարտեզի կառուցման նախագծա-նախահաշվայ փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ
Աշխատանքների ռիսկայնության աստիճանը	Միջինից բարձր (III կատեգորիա)) համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015 թիվ 596-Ն որոշման
Փորձաքննության տեսակը	Պարզ փորձաքննություն
Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լին Հայաստանի Հանրապետության կիրառելի շինարարական նորմե նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքնե տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկակ

	նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխա
Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհե քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհե փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիմ վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայ ☐ ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, ☐ ՀՀ գնումների մասին օրենքի, ☐ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 12.12.2022թ. թիվ 28-Ն հրաման ☐ ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատվ ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթե փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնայ թույլտվությունների տրամադրման կարգերի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամա հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: Հաղթող մասնակիցն իր միջոցներով պատվիրատուից (Թալի համայնքապետարան, Գայի 1 հասցե) վերցնում է նախագծանախահաշվա փաստաթղթերը, անցկացնում փորձաքննություն և հետ վերադարձն պատվիրատուին: Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնա տարբերակով:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	**ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրը	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրվանից հաշված 21-րդ (քսանմեկ) օրը

ՉԱՓԱԲԱԺԻՆ 5

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ԹԱԼԻՆ ՄԻՐՈՅԱՆ ԵՐԵԱՆՅԱՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ և ՔՈԹԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՔՈԹԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԿԱՆԱՉ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը	Հուշարձանի տեղադրում և կանաչ գոտու ստեղծում
Ֆինանսավորման աղբյուր	Համայնքային բյուջե
Պատվիրատու	Թալինի համայնքապետարան
Ծառայության անվանումը	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ք.Թալին Միրոյան Երևանյ Սպանդարյան և Քոթանյան փողոցների խաչմերուկում Հայկ Նահապե հուշարձանի տեղադրման և Քոթանյան փողոցի կանաչ գոտու ստեղծմ աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննությ ծառայություններ
Աշխատանքների ռիսկայնության աստիճանը	Միջինից բարձր (III կատեգորիա)) համաձայն ՀՀ կառավարության 19.03.201 թիվ 596-Ն որոշման
Փորձաքննության տեսակը	Պարզ փորձաքննություն
Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լի Հայաստանի Հանրապետության կիրառելի շինարարական նորմե

	տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկակ առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխա
Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհե քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհե փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիմ վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձա ☐ ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, ☐ ՀՀ գնումների մասին օրենքի, ☐ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 12.12.2022թ. թիվ 28-Ն հրաման ☐ ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատվ ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթե փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնա թույլտվությունների տրամադրման կարգերի, ☐ ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամա հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: Հաղթող մասնակիցն իր միջոցներով պատվիրատուից (Թալ համայնքապետարան, Գայի 1 հասցե) վերցնում է նախագծանախահաշվա փաստաթղթերը, անցկացնում փորձաքննություն և հետ վերադարձն պատվիրատուին: Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնա տարբերակով:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	**ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրը	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրվանի հաշված 21-րդ (քսանմեկ) օրը

ՉԱՓԱԲԱԺԻՆ 6

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՏԱՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ «ՄԱՍՏԱՐԱ» ԳՐՎԱԾՔԻ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը	Տեղանվան գրվածքի և դրոշի տեղադրում
Ֆինանսավորման աղբյուր	Համայնքային բյուջե
Պատվիրատու	Թալինի համայնքապետարան
Ծառայության անվանումը	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Մաստարա բնակավայրի մուտքի մ «Մաստարա» գրվածքի և ՀՀ պետական դրոշի տեղադրման նախագ նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ
Աշխատանքների ռիսկայնության աստիճանը	Միջինից բարձր (III կատեգորիա)) համաձայն ՀՀ կառավարության 19.03.201 թիվ 596-Ն որոշման
Փորձաքննության տեսակը	Պարզ փորձաքննություն
Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լի Հայաստանի Հանրապետության կիրառելի շինարարական նորմ

	տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկակ առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխա
Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհե քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհե փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիմ վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձա □ ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, □ ՀՀ գնումների մասին օրենքի, □ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 12.12.2022թ. թիվ 28-Ն հրաման □ ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, □ ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատվ ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթե փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնայ թույլտվությունների տրամադրման կարգերի, □ ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի: Հաղթող մասնակիցն իր միջոցներով պատվիրատուից (Թալի համայնքապետարան, Գայի 1 հասցե) վերցնում է նախագծանախահաշվա փաստաթղթերը, անցկացնում փորձաքննություն և հետ վերադարձն պատվիրատուին: Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակ բնօրինակից և էլեկտրոնա տարբերակով:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրը	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին տրամադրելու օրվանի հաշված 21-րդ (քսանմեկ) օրը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Թալին, Գայի 1
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900462131045
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար՝ Տ. Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացի փ.
83շ բն 40
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05547385
Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«12» փետրվարի 2026 թ. կնքված
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/08» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների այդ թվում**.											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/1	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա 250մ, Հացաշեն150մ, Ն.Արթիկ 365մ, Սուսեր 271մ, Ցամաքասար230մ, Մաստարա 400մ, Կաթնաղբյուր 990մ, Դավթաշեն 890մ, Գառնահովիտ 400մ, Ագարակավան 170մ,, Ն.Բազմաբերդ 440մ, Արագածավան 700մ, Թաթու 300մ, Դաշտադեմ 310մ ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ		420000	420000	420000	420000	420000	420000	420000	420000	420000	420000	420000
2	50531140/2	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զովասար-580մ, Կարմրաշեն 1030մ, Ն.Սասնաշեն 9500մ, Ոսկեթաս 320մ գազամատակարարման ներքին ցանցի ընդլայնման և Վ. Բազմաբերդ 5500մ. գազամատակարարման ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ		480000	480000	480000	480000	480000	480000	480000	480000	480000	480000	480000

3	50531140/3	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Գառնահովիտ -3500մ ջրամատակարարման ցանցի կառուցման, Դավթաշեն 4500մ, Աշնակ 11500մ ջրամատակարարաման ցանցի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ		360000	360000	360000	360000	360000	360000	360000	360000	360000	360000	360000
4	50531140/4	ՀՀ Արագածոտնի Մարզի Թալին համայնքի Մաստարա բնակավայրում 75 տեղ հզորության մանկապարտեզի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ		600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000
5	50531140/5	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ք.Թալին Միրոյան Երևանյան Սպանդարյան և Քոթանյան փողոցների խաչմերուկում Հայկ Նահապետի հուշարձանի տեղադրման և Քոթանյան փողոցի կանաչ գոտու ստեղծման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ		99000	99000	99000	99000	99000	99000	99000	99000	99000	99000	99000
6	50531140/6	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Մաստարա բնակավայրի մուտքի մոտ «Մաստարա» գրվածքի և ՀՀ պետական դրոշի տեղադրման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ		24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Թալին, Գայի 1
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գանձարանային կառավարչություն
ՀՎՀՀ 00404651042
Հ/Հ 05030501
Համայնքի ղեկավար՝ Տ. Սարգսյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացի փ,
83$_2$ բն 40
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300302062823 00
ՀՎՀՀ 05547385
Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

/ստորագրություն/ Կ.Տ

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար՝

PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _10/02/26_____

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER	001646	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE	
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	1930030206282300	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER	ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT	384,924.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold	Երեք հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր քսանչորս դրամ	
57:	ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION	ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ ֆինանս. նախ.	
59:	ՇԱՀԱՌՈՒՆ BENEFICIARY	Գնումների որակավորման ապահովում կանխիկ փողի ձեւով, ՀՀֆիանսների նախարարություն	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	900008000698	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS	ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/08 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *		

ACCOUNT HOLDER Seal SIGNATURE

ՀԱՇՎԵՏԵՐ Կ.Տ. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	500.00 Հայկական դրամ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Converse Bank CJSC
ՊԿ/ID 188 10 FEB 2026
Ընդունված է / Accepted
Լիւիթ Միդոյան Lilit Midoyan

* Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում

CONVERSE BANK	Կոնվերս Բանկ ՓԲԸ Ընթացիկ և Խնայողական հաշիվների բացման և վարման կարգ	PR 72-01		
	Հավելված 9 Վճարման հանձնարարագրի օրինակելի ձև	Ամսաթիվ 22.05.17թ.	Խմբագրություն 12	1/ 75

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար՝

PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _10/02/26_____

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER	001647	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE	
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	1930030206282300	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER	ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT	256,616.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold	Երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր տասնվեց դրամ	
57:	ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION	ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ ֆինանս. նախ.	
59:	ՇԱՀԱՌՈՒՆ BENEFICIARY	Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	900008000664	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS	ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԾՁԲ-26/08 ծածկագրով պայմանագրի ապահովում	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *		

ACCOUNT HOLDER Seal SIGNATURE

ՀԱՇՎԵՏԵՐ Կ.Տ. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	500.00 Հայկական դրամ

** Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում*

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Converse Bank CJSC
ՊԿ/ID 189
10 FEB 2026
Ընդունված է/Accepted
Լիտոն Լիտ
Միջոցով Midova